

Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ԱՀ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների որակավորման ստուգարքի

Հարց 1	<i>Ովքե՞ր ունեն ԱՀ-ում ընտրելու իրավունք:</i>
Պատ.	Արցախի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն քվեարկության անցկացման օրը 18 տարին լրացած Արցախի Հանրապետության քաղաքացիները: Արցախի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրությունն անցկացվող համայնքում մինչև քվեարկության օրն առնվազն վերջին մեկ տարվա հաշվառում ունենալու դեպքում: (ԸՕ հ.2, մաս 1)
Հարց 2	<i>ՏԻՄ ընտրությունների ժամանակ ո՞ր դեպքում ԱՀ քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք ունեն ընտրելու:</i>
Պատ.	Արցախի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն ընտրությունն անցկացվող համայնքում մինչև քվեարկության օրն առնվազն վերջին մեկ տարվա հաշվառում ունենալու դեպքում: (ԸՕ հ.2, մաս 1)
Հարց 3	<i>Ովքե՞ր չունեն ԱՀ-ում ընտրելու և ընտրվելու իրավունք:</i>
Պատ.	Ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: (ԸՕ հ.2, մաս 3)
Հարց 4	<i>Պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողներ համարվող քաղաքացիները ո՞ր ընտրություններին չեն կարող մասնակցել:</i>
Պատ.	Պարտադիր ժամկետային զինծառայության մեջ գտնվող կամ վարժական հավաքներ անցնող զինծառայողները տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ժամանակ քվեարկություններին չեն կարող մասնակցել: (ԸՕ հ.2, մաս 4)
Հարց 5	<i>Ո՞ր ընտրություններն են համարվում համապետական:</i>
Պատ.	Համապետական են համարվում Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրությունները: (ԸՕ հ.6, մաս 4)
Հարց 6	<i>Ի՞նչ պարբերականությամբ է տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ տվյալներ հաղորդել տարածքային ընտրական հանձնաժողովին:</i>
Պատ.	Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովները պարտավոր են մինչև ժամը 11.30-ը, 14.30-ը, 17.30-ը և 20.30-ը տարածքային ընտրական հանձնաժողով հաղորդել համապատասխանաբար մինչև ժամը 11.00-ն, 14.00-ն, 17.00-ն և 20.00-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը: (ԸՕ հ.6, մաս 9)
Հարց 7	<i>Ո՞ր պետական մարմինն է վարում ԱՀ ընտրողների ռեգիստրը:</i>
Պատ.	Արցախի Հանրապետության ընտրողների ռեգիստրը վարում և ընտրողների ցուցակը կազմում է քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառումն իրականացնող Արցախի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (լիազոր մարմին): Լիազոր մարմինը պատասխանատու է Արցախի Հանրապետության ընտրողների ռեգիստրը և ընտրողների ցուցակը ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան վարելու և կազմելու համար: (ԸՕ հ.7, մաս 2)

Հարց 8	<i>Ի՞նչ տվյալներ են նշվում ընտրողների ցուցակում:</i>
Պատ.	<p>Ընտրողների ցուցակում նշվում են շրջանի և համայնքի անվանումը, իսկ առանձին սյունակներում՝ ընտրողի՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ցուցակում հերթական համարը. 2) ազգանունը, անունը, հայրանունը (հայրանունը՝ հաշվառման փաստաթղթերում առկայության դեպքում). 3) ծննդյան ամսաթիվը. 4) հաշվառման վայրի հասցեն, Արցախի Հանրապետությունում հաշվառում չունեցող ընտրողների դեպքում՝ քվեարկության օրը Արցախի Հանրապետությունում բնակվելու վայրի հասցեն: <p style="text-align: right;">(ԸՕ հ.9, մաս 2)</p>
Հարց 9	<i>Տեղամասային կենտրոնում ընտրողների ցուցակները պարտադիր ի՞նչ տեղեկանք են ներառում:</i>
Պատ.	<p>Լիազոր մարմինը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրում է ընտրողների ցուցակների մեկ օրինակ, որը վերջին էջում ներառում է տեղեկանք՝ ընտրողների ցուցակներում անձշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի և պայմանների մասին՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.10, մաս 1)</p>
Հարց 10	<i>Ընտրողների վերջնական ցուցակները՝ ըստ տեղամասերի, լիազոր մարմինը կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարը քանի՞ օրինակ և քվեարկության օրվանից քանի՞ օր առաջ է տրամադրում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին:</i>
Պատ.	<p>Լիազոր մարմնի կողմից կազմվող ընտրողների ցուցակները (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված երկու օրինակից (ընտրողների ցուցակների, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների 1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար), ինչպես նաև ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանված՝ ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը լիազոր մարմինը քվեարկության օրվանից երկու օր առաջ տրամադրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.10, մաս 3)</p>
Հարց 11	<i>Ինչքանով են մատչելի ընտրողների ցուցակները:</i>
Պատ.	<p>Արցախի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասում, քրեակատարողական հիմնարկում կազմվող, ինչպես նաև ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ է ծանոթության համար:</p> <p>Ընտրողների ստորագրած ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից լուսապատճեններ չեն հանվում, դրանք չեն լուսանկարվում և տեսանկարահանվում:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.11, մաս 1)</p>
Հարց 12	<i>Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ընտրողների ցուցակների վերջնական օրինակը քվեարկության օրվանից քանի՞ օր առաջ է փակցնում տեղամասային կենտրոնում:</i>
Պատ.	<p>Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը, քվեարկության օրվանից 2 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը փակցնում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Այս ցուցակները տեղամասային կենտրոնում մնում են փակցված մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորությունների դադարման օրը:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.11, մաս 4)</p>
Հարց 13	<i>Քանի՞ ընտրող կարող է ընդգրկել ընտրական տեղամասը:</i>
Պատ.	<p>Ընտրական տեղամասը կազմավորման պահին չպետք է ունենա ավելի քան 2000 ընտրող: Այդ թիվը կարող է փոփոխվել ընտրողների ցուցակների ճշգրտման և ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, բայց ոչ ավելի, քան մեկ տոկոսի չափով:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.14, մաս 3)</p>

Հարց 14	Քանի՞ ընտրատարածք է կազմավորվում ԱՀ տարածքում:
Պատ.	Արցախի Հանրապետության տարածքում կազմավորվում են Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվին հավասար թվով (11) ընտրատարածքներ: (ԸՕ հ.17, մաս 1)
Հարց 15	Ե՞րբ է սկսվում և ավարտվում նախընտրական քարոզչությունը:
Պատ.	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: (ԸՕ հ.18, մաս 1)
Հարց 16	Ինչպե՞ս է կազմակերպվում ֆինանսական միջոցների հաշվառումը ընտրական հանձնաժողովում:
Պատ.	Ընտրություններից հետո՝ տասնօրյա ժամկետում, տեղամասային ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողով, իսկ քսանօրյա ժամկետում՝ տարածքային ընտրական հանձնաժողովը կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում է հաշվետվություն ֆինանսական միջոցների ծախսման վերաբերյալ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Արցախի Հանրապետության վերահսկիչ պալատ ներկայացնում է հաշվետվություն կատարված ծախսերի վերաբերյալ՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: (ԸՕ հ.23, մաս 4)
Հարց 17	Ի՞նչ միջոցներից է համալրվում թեկնածուի նախընտրական հիմնադրամը:
Պատ.	Թեկնածուի նախընտրական հիմնադրամը համալրվում է՝ 1) իր անձնական միջոցներից. 2) իրեն առաջադրած կուսակցության տրամադրած միջոցներից. 3) ընտրելու իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից : (ԸՕ հ.25, մաս 2)
Հարց 18	Ե՞րբ են դիտորդներին հանձնվում վկայականներ:
Պատ.	Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին հանձնում է դիմումն ստանալուց ոչ ուշ, քան 7 օր հետո: (ԸՕ հ.30, մաս 3)
Հարց 19	Ե՞րբ են և ինչպե՞ս են վստահված անձանց տրվում վկայականներ:
	Կուսակցությունների ընտրական ցուցակները և թեկնածուներին գրանցելուց հետո, ըստ ներկայացված ցուցակների, վստահված անձանց տրվում են կնքված վկայականներ: (ԸՕ հ.32, մաս 2)
Հարց 20	Կարո՞ղ է վստահված անձը մասնակցել ընտրական հանձնաժողովների նիստերին և ի՞նչ իրավունքով:
Պատ.	Վստահված անձն իրավունք ունի խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա լինելու քվեարկության սենյակում: (ԸՕ հ.33, մաս 1, կետ 1)
Հարց 21	Կարո՞ղ է վստահված անձը քվեարկության արդյունքներն ամփոփելիս ծանոթանալ քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին:
Պատ.	Վստահված անձն իրավունք ունի քվեարկության արդյունքներն ամփոփելիս ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ներկա գտնվելու քվեաթերթիկների հաշվարկմանը և քվեարկության արդյունքների ամփոփմանը: (ԸՕ հ.33, մաս 1, կետ 7)

Հարց 22	<i>Ո՞վքեր իրավունք ունեն քվեարկության օրը ներկա գտնվել տեղամասային կենտրոնում:</i>
Պատ.	Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու իրավունք ունեն վերադաս ընտրական հանձնաժողովների անդամները՝ այդ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ (ԸՕ հ. 37, կ.7), դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը (ԸՕ հ. 31, մաս 1,կ.1), վստահված անձինք (յուրաքանչյուր թեկնածուի և ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) 1-ական անդամ (ԸՕ հ.33, մ.1):
Հարց 23	<i>Ընտրական հանձնաժողովների ի՞նչ համակարգ է գործում ԱՀ-ում:</i>
Պատ.	Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով հանրապետությունում կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ: (ԸՕ հ.34, մաս 1)
Հարց 24	<i>Ովքե՞ր են ընդգրկվում տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում:</i>
Պատ.	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող այն քաղաքացիները, ովքեր կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով անցել են ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ և ստացել որակավորման վկայականներ: (ԸՕ հ.39, մաս 3)
Հարց 25	<i>Ինչպե՞ս է կազմավորվում տարածքային ընտրական հանձնաժողովը:</i>
Պատ.	Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները նշանակվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների կողմից՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի մեկ անդամ՝ տարածքային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով: Տարածքային ընտրական հանձնաժողովը կազմավորվում և իր լիազորությունները ստանձնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իր լիազորությունները ստանձնելու պահից 15 օր հետո: Տարածքային ընտրական հանձնաժողովը համարվում է կազմավորված, եթե նշանակվել է նրա անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Եթե մինչև տարածքային ընտրական հանձնաժողովի կազմավորման համար սահմանված ժամկետում ընտրական հանձնաժողովի սահմանված կարգով տարածքային ընտրական հանձնաժողովի կազմավորման համար անհրաժեշտ անդամների նվազագույն թիվը չի նշանակվել, ապա այն մինչև սահմանված նվազագույն թիվը լրանալը նշանակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը: Տարածքային ընտրական հանձնաժողով կազմավորող մարմինների առաջարկությունների հիման վրա տարածքային ընտրական հանձնաժողովի կազմը՝ առաջարկությունը ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, հրապարակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը: (ԸՕ հ.41, մաս 1)
Հարց 26	<i>Ո՞վ և ի՞նչ ժամկետում է նշանակում տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին՝ սահմանված կարգով և ժամկետում տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ չընտրվելու դեպքում :</i>
Պատ.	Սահմանված կարգով և ժամկետում տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ չընտրվելու դեպքում տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին նշանակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տվյալ տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներից, եռօրյա ժամկետում: (ԸՕ հ.41, մաս 5)

Հարց 27	<i>Ինչպե՞ս է կազմավորվում տեղամասային ընտրական հանձնաժողովը:</i>
Պատ.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին նշանակում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները՝ տարածքային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով:</p> <p>Տեղամասային ընտրական հանձնաժողովները նշված կարգով չկազմավորվելու դեպքում հանձնաժողովի թափուր տեղերը եռօրյա ժամկետում համալրում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.42, մաս 1,4)</p>
Հարց 28	<i>Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը ե՞րբ է կայանում և ո՞վ է այն վարում:</i>
Պատ.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը կայանում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում, տեղամասային կենտրոնում: Նիստը հրավիրում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, իսկ վարում է տեղամասային ընտրական հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.42, մաս 5)</p>
Հարց 29	<i>Ինչպե՞ս է ընտրվում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և հանձնաժողովի քարտուղարը:</i>
Պատ.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովն առաջին նիստում իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ և հանձնաժողովի քարտուղար:</p> <p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և հանձնաժողովի քարտուղարի ընտրություններն անցկացվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և հանձնաժողովի քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով՝ երկօրյա ժամկետում:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.42, մաս 6,7)</p>
Հարց 30	<i>Ի՞նչ է արվում, եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար քվեարկվել է մեկից ավելի թեկնածու:</i>
Պատ.	<p>Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի պաշտոնի համար քվեարկվել է մեկից ավելի թեկնածու, ապա ընտրվում է առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.42, մաս 7 և ԸՕ հ.40, մաս 7)</p>
Հարց 31	<i>Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը ընտրական օրենսգրքով նախատեսված ժամկետում հանձնաժողովի նախագահ չի ընտրում, ո՞ւմ կողմից և ի՞նչ ժամկետում է նշանակվում տվյալ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը:</i>
Պատ.	<p>Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովը նախատեսված ժամկետում հանձնաժողովի նախագահ չի ընտրում, ապա համապատասխան ընտրական հանձնաժողովի նախագահին նշանակում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ սահմանված ժամկետից (2 օր) ոչ ուշ, քան 2 օր հետո՝ համապատասխան հանձնաժողովի կազմից:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.42, մաս 8)</p>
Հարց 32	<i>Որո՞նք են ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու հիմքերը:</i>
Պատ.	<p>Ընտրական հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) եթե չունի հանձնաժողովում նշանակվելու իրավունք. 2) եթե դատապարտվել է Արցախի Հանրապետության քրեական օրենսգրքի 147-158-րդ հոդվածներով, կամ նրա նկատմամբ որպես պատիժ կիրառվել է կալանք կամ ազատազրկում. 3) եթե ներկայացրել է հանձնաժողովի անդամի պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում: Այդ դիմումը կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը ներկայացնում է Հանրապետության Նախագահին, իսկ մյուս հանձնաժողովների անդամները՝ վերադաս ընտրական հանձնաժողովի նախագահին.

	<p>4) եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը կամ հանձնաժողովի քարտուղարը ներկայացրել է այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում: Նման դիմում կարող է ներկայացվել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ մինչև ժամը 18.00-ն՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:</p> <p>5) եթե գորակոչվել է.</p> <p>6) եթե նա մահացել է.</p> <p>7) ընտրական օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.43, մաս 4)</p>
Հարց 33	<i>Ե՞րբ է հանձնաժողովի նիստը համարվում իրավագոր:</i>
Պատ.	<p>Ընտրական հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին, բացառությամբ համապետական ընտրություններ նշանակելու օրվանից սկսած՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ ընկած ժամանակահատվածում կայացող հերթական նիստերի:</p> <p>Համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ հերթական նիստերն իրավագոր են՝ անկախ նիստին ներկա անդամների թվից, եթե սպառված են հանձնաժողովի՝ նիստ գումարելու համար անհրաժեշտ թվով անդամներին նիստին մասնակից դարձնելու բոլոր հնարավորությունները:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.44, մաս 4)</p>
Հարց 34	<i>Ո՞ր դեպքում է հանձնաժողովի որոշումը համարվում ընդունված:</i>
Պատ.	<p>Ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է մասնակցել քվեարկությանը: Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերի:</p> <p>Համապետական ընտրություններ նշանակվելու օրվանից սկսած՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ որոշում ընդունելը ներառյալ, որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին կողմ քվեարկած հանձնաժողովի անդամների թիվը մեծ է դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների թվից:</p> <p>Ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշում ընդունելիս ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.44, մաս 5,6)</p>
Հարց 35	<i>Ո՞վքեր իրավունք ունեն տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի պահանջի մասին դիմում ներկայացնելու:</i>
Պատ.	<p>Թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (վերահաշվարկ) դիմում:</p> <p>Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.47, մաս 1)</p>
Հարց 36	<i>Ի՞նչ պետք է ներառի վերահաշվարկի մասին դիմումը:</i>
Պատ.	<p>Վերահաշվարկի դիմումը պետք է ներառի դիմումատուի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն) և այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ, ինչպես նաև այն քվեարկության արդյունքները (եթե միաժամանակ կայացել է մի քանի քվեարկություն), որոնց վերաբերյալ պահանջվում է վերահաշվարկ անցկացնել:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.47, մաս 2)</p>

Հարց 37	Տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացման ռեժիմը:
Պատ.	<p>Տարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկի դիմումները գրառում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ նշելով ստացման ժամանակը:</p> <p>Վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից, և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ հինգերորդ օրը, ժամը 14.00-ին (այսուհետ՝ վերահաշվարկի վերջնաժամկետ): Ընտրական հանձնաժողովը վերահաշվարկն իրականացնում է առանց հանգստյան օրերի՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն: Ընտրական հանձնաժողովը շարունակում է վերահաշվարկը ժամը 18.00-ից հետո, եթե չի ավարտել ընտրական տեղամասի արդեն սկսած վերահաշվարկը, ինչպես նաև այն դեպքերում, եթե մինչև ժամը 18.00-ն աշխատելու պայմաններում մինչև վերահաշվարկի վերջնաժամկետը հնարավոր չէ ավարտել ընտրական օրենսգրքով սահմանված քվեարկության արդյունքների վերահաշվարկը:</p> <p>Տարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկում է բոլոր այն քվեարկության արդյունքները, որոնց վերաբերյալ տարածքային հանձնաժողովի կարծիքով ներկայացված են քվեարկության արդյունքների սխալ ամփոփման հիմնավոր ապացույցներ, ինչպես նաև վերահաշվարկում է բոլոր այն քվեարկության արդյունքները, որոնց արձանագրությունների ուսումնասիրմամբ (այդ թվում՝ անձտությունների ուսումնասիրման) տարածքային հանձնաժողովում ծագել են կասկածներ արդյունքների սխալ ամփոփման վերաբերյալ:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.47, մաս 5,6,7)</p>
Հարց 38	Ի՞նչ լիազորություններ ունի տեղամասային ընտրական հանձնաժողովը:
Պատ.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովը՝</p> <ol style="list-style-type: none"> 1) կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում. 2) կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, արձանագրության օրինակը փակցնում է տեղամասային կենտրոնում. 3) հանձնաժողովի կնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակները, ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը և քվեատուփը ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողով. 4) իրականացնում է ընտրական օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ: <p style="text-align: right;">(ԸՕ հ.50, մաս 1)</p>
Հարց 39	Ինչպե՞ս են համագործակցում ընտրական հանձնաժողովներն ու ոստիկանությունը:
Պատ.	<p>Արցախի Հանրապետության ոստիկանությունը պարտավոր է ապահովել ընտրությունների անցկացման բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովների ու դրանց անդամների անկաշկանդ գործունեությունը: Արցախի Հանրապետության ոստիկանությունն ընտրությունների հետ կապված միջոցառումներում ապահովում է պատշաճ կարգ ու կանոն, հանձնաժողովի նախագահի պահանջով աջակցում հանձնաժողովներին, ապահովում է ընտրական փաստաթղթերի անվտանգ տեղափոխումն ու դրանց պահպանումն ընտրական հանձնաժողովներում:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.52)</p>
Հարց 40	Ե՞րբ է սկսվում և ե՞րբ ավարտվում քվեարկությունը:
Պատ.	<p>Քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոններում՝ ժամը 8.00-ից մինչև 20.00-ն:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.53, մաս 1)</p>

Հարց 41	Նկարագրել քվեարկության սենյակը՝ իր պարտադիր կահավորանքով:
Պատ.	<p>Քվեարկության սենյակը պետք է լինի հնարավորին չափ ընդարձակ և բավարարի հետևյալ պահանջները՝</p> <p>1) հնարավորություն ընձեռվի քվեարկության ողջ ընթացքում ապահովել տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր անդամների և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց միաժամանակյա կանոնավոր աշխատանքը.</p> <p>2) հնարավորություն ընձեռի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներին և դիտորդներին իրենց տեսադաշտում պահել քվեատուփը, քվեարկության խցիկները (պայմանով, որ չի խախտվում քվեարկության գաղտնիքը), քվեարկության խցիկներից մինչև քվեատուփն ընկած հատվածը:</p> <p>Քվեարկության սենյակի կահավորումը պետք է ավարտվի քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.54, մաս 2,3)</p>
Հարց 42	Նկարագրել քվեաթերթիկի ձևը և շարադրանքը (թվանդակությունը):
Պատ.	<p>Քվեաթերթիկը պետք է ներառի տպագրատան անվանումը և ծանուցում՝ քվեաթերթիկի լրացման կարգի մասին: Քվեաթերթիկները պատրաստվում են անթափանց թղթից:</p> <p>Քվեաթերթիկում նշվում են ձախ կողմում՝ այբբենական հերթականությամբ, թեկնածուների ազգանունը, անունը, հայրանունը, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) անվանումները, իսկ աջ կողմում նախատեսվում են դատարկ քառանկյուններ՝ քվեարկողի կողմից նշում կատարելու համար:</p> <p>Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում քվեաթերթիկում թեկնածուի ազգանվան տողի ներքևում նշվում են «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը՝ յուրաքանչյուրի դիմաց աջ կողմում՝ նշումի համար նախատեսված դատարկ քառանկյունում:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.56, մաս 2-4)</p>
Հարց 43	Ի՞նչ քանակով քվեաթերթիկ է հատկացվում տեղամասային ընտրական հանձնաժողովին և Ե՞րբ:
Պատ.	<p>Քվեաթերթիկները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացվում են քվեարկության նախորդ օրն ընտրական տեղամասում ընտրողների թվի մինչև երեք տոկոս ավելի քանակով, բայց ոչ պակաս, քան ընտրողների թվից երկու քվեաթերթիկ ավելին:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.56, մաս 7)</p>
Հարց 44	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները ինչպե՞ս և Ե՞րբ են հանձնվում տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին:
Պատ.	<p>Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները տեղադրում է անթափանց փաթեթներում, առանց դրանց վրա նշումներ կատարելու փակում է, կնքում դրանք և քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ հանձնում է տարածքային ընտրական հանձնաժողովին՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով՝ կատարելով հանձնվող կնիքների բացառապես քանակական հաշվառում:</p> <p>Տարածքային ընտրական հանձնաժողովում փաթեթները կնքվում և քվեարկության նախորդ օրը հանձնվում են տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին՝ յուրաքանչյուրին մեկ փաթեթավորված կնիք:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.57, մաս 3,4)</p>
Հարց 45	Քվեարկության երկրորդ փուլ, վերաքվեարկություն կամ նոր ընտրություն անցկացնելու դեպքում փոխվո՞ւմ է, արդյոք, տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը:
Պատ.	<p>Քվեարկության երկրորդ փուլ, վերաքվեարկություն կամ նոր ընտրություն անցկացվելու դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովներին տրվում են նոր կնիքներ:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.57, մաս 6)</p>
Հարց 46	Որտե՞ղ և ինչպե՞ս են պահպանվում ստորագրված քվեաթերթիկները, կնիքի փաթեթը:
Պատ.	<p>Քվեաթերթիկները և փաթեթավորված կնիքը պահվում են քվեարկության սենյակում գտնվող հատուկ չիրկիզվող պահարանում:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.58, մաս 2)</p>

Հարց 47	Ինչպիսի՞ նյութեր են փակցվում քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ:
Պատ.	Քվեարկության սենյակում կամ դրա մուտքի մոտ փակցվում են քվեաթերթիկների նմուշները, Հանրապետության Նախագահի թեկնածուների կենսագրություններով ու լուսանկարներով պաստառ, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակները: (ԸՕ հ.58, մաս 6)
Հարց 48	Նկարագրեք տեղամասային ընտրական հանձնաժողովների գործառույթները քվեարկության նախորդ օրը:
Պատ.	Քվեարկության նախորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի երեք անդամի, որոնք պարտավոր են այդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն, ստորագրել բոլոր քվեաթերթիկները (ստորագրությունները դրվում են քվեաթերթիկների հակառակ կողմում)՝ գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելով: (ԸՕ հ.58, մաս 7)
Հարց 49	Նկարագրեք տեղամասային ընտրական հանձնաժողովների գործառույթները քվեարկության օրը՝ ժամը 7.00-ից մինչև 8.00-ն:
Պատ.	<p>1. Քվեարկության օրը՝ ժամը 7.00-ին, տեղամասային ընտրական հանձնաժողովը տեղամասային կենտրոնում կայացած նիստում վիճակահանությամբ որոշում է.</p> <p>1) ընտրողների գրանցումն իրականացնող անդամներին՝ մինչև 750 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ անդամ.</p> <p>2) քվեաթերթիկներ հատկացնող անդամներին՝ մինչև 750 ընտրողի հաշվարկով առնվազն մեկ անդամ.</p> <p>3) քվեաթերթիկների կնքման համար պատասխանատու առնվազն մեկ անդամի.</p> <p>4) քվեատուփի համար պատասխանատու առնվազն մեկ անդամի.</p> <p>5) շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող առնվազն մեկ անդամի.</p> <p>6) տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների՝ գործառույթների հերթափոխային ժամակարգը:</p> <p>Հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վիճակահանությանը չեն մասնակցում:</p> <p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ բացում է չիրկիզվող պահարանը, հանում է քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները և փաթեթավորված կնիքը, ստուգում է փաթեթավորված կնիքի փաթեթի ամբողջականությունը, բացում է փաթեթավորված կնիքը, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը: Ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է քվեատուփը, ընտրողների ցուցակները հանձնում է ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամներին, քվեաթերթիկները հարյուրական փաթեթով՝ քվեաթերթիկներ հատկացնող անդամներին, կնիքը և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ քվեաթերթիկների կնքման համար պատասխանատու անդամին: Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը համապատասխան գրառում է կատարում գրանցամատյանում: (ԸՕ հ.61, մաս 1,2)</p>
Հարց 50	Միաժամանակ քանի՞ քվեարկող կարող է գտնվել տեղամասային կենտրոնում:
Պատ.	Քվեարկության սենյակում միաժամանակ չի կարող գտնվել 15-ից ավելի քվեարկող: Քվեարկության բնականոն ընթացքն ապահովելու համար ընտրական հանձնաժողովի նախագահն իրավունք ունի ընտրողներին քվեարկության սենյակ թողնել հերթականությամբ՝ մեկ-մեկ: (ԸՕ հ. 62, մաս 6)
Հարց 51	Ո՞ւմ օգնությանը կարող է դիմել ընտրողը, եթե ինքնուրույն չի կարող ստորագրել ընտրողների ցուցակում:
Պատ.	Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմել այլ քաղաքացու օգնության, բացառությամբ՝ ընտրական հանձնաժողովի անդամների և վստահված անձանց: (ԸՕ հ.63, մաս 2)

Հարց 52	Որո՞նք են անձը հաստատող այն փաստաթղթերը, որոնցով ընտրողը կարող է ներկայանալ քվեարկության:
Պատ.	<p>Անձը հաստատող փաստաթուղթ է համարվում անձնագիրը, անձնագրին փոխարինող ժամանակավոր փաստաթուղթը՝ տրված լիազոր մարմնի կողմից, իսկ զինծառայողի համար՝ զինվորական վկայականը կամ զինվորական գրքույկը, եթե գրանցվում են (քվեարկում են) զինվորական մասի կազմած ընտրողների ցուցակում:</p> <p>Ընտրողի անձը հաստատող փաստաթղթի վավերականության ժամկետի ավարտը հիմք չէ նրան քվեարկության չթողնելու համար:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.63, մաս 3)</p>
Հարց 53	Նկարագրել ընտրողի գործողությունները քվեարկության սենյակում /քվեարկության կարգը/:
Պատ.	<p>Գրանցվում է ընտրական ցուցակում, ստանում քվեաթերթիկ, ներկայացնում կնքման, քվեարկում քվեախցիկում, քվեաթերթիկը գցում քվեատուփի մեջ և տեղամասային կենտրոնից անհապաղ դուրս գալիս:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.64)</p>
Հարց 54	Ի՞նչ իրավունքներ ունի ընտրողը, եթե կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել:
Պատ.	<p>Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.64, մաս 6)</p>
Հարց 55	Ի՞նչ է արվում ընտրողի կողմից սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկը վերադարձնելու դեպքում:
Պատ.	<p>Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկն անհապաղ մարվում է:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.64, մաս 6)</p>
Հարց 56	Քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամի գործառույթը
Պատ.	<p>Քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամը բացում է քվե-տուփի ձեղքը և ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեաթերթիկը քվեատուփի մեջ գցելու համար:</p> <p>Քվեատուփի համար պատասխանատու հանձնաժողովի անդամն իր նախաձեռնությամբ կամ հանձնաժողովի այլ անդամի կամ վստահված անձի պահանջով կարող է ստուգել (հանձնաժողովի այլ անդամին կամ վստահված անձին ներկայացնել) ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.65, մաս 4)</p>
Հարց 57	Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության ավարտից հետո (20.00-ից) մինչև քվեատուփը բացելը:
Պատ.	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ժամը 20.00-ին հայտարարում է քվեարկության ավարտի մասին և արգելում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: Հանձնաժողովը քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս, որից հետո հանձնաժողովի նախագահը փակում է քվեատուփի ձեղքը:</p> <p>Տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ (նիստին կարող է մասնակցել նաև թեկնածուն) սկսում է քվեարկության արդյունքների ամփոփման նիստը: Այդ նպատակով՝</p> <p>1) հաշվարկում է չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ տրված քվեաթերթիկների ընդհանուր թիվը, կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով մարում է չօգտագործված քվեաթերթիկները, փաթեթավորում, կնքում է փաթեթը և տեղադրում ընդհանուր փաթեթում:</p>

	<p>2) հաշվարկում է ընտրողների յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակի (այդ թվում՝ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակի) ընտրողների թիվը՝ առանձին առանձին, լրացուցիչ ցուցակների ընտրողների թվերի գումարին ավելացնելով ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը՝ ստանում է ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր թիվը:</p> <p>3) ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում) ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվարկում է քվեարկության մասնակիցների (քվեաթերթիկներ ստացած ընտրողների) թիվը, փաթեթավորում է ցուցակները, կնքում փաթեթը և տեղադրում ընդհանուր փաթեթում:</p> <p>Այդ գործողությունների արդյունքները հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում: Հանձնաժողովի նախագահը գրանցամատյանում արձանագրված՝ ընտրական տեղամասում քվեարկության մասնակիցների թիվը կապի հնարավոր միջոցներով անհապաղ հայտնում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին: Վստահված անձի պահանջով նրան տրվում է գրանցամատյանից քաղվածք ընտրությունների մասնակիցների թվի վերաբերյալ՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով ու հանձնաժողովի կնիքով:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.66, մաս 1,2,3)</p>
<p>Հարց 58</p>	<p><i>Նկարագրեք տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեաթերթիկների տեսակավորման կարգը:</i></p>
<p>Պատ.</p>	<p>Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, քվեատուփից հանում մեկ քվեաթերթիկ, բարձրաձայն հայտարարում քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում նաև, թե ինչպես է քվեարկված, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի արտահայտած կարծիքին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության արդյունքով (քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը), իսկ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի, քվեաթերթիկը դնում է համապատասխան թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ քվեաթերթիկը:</p> <p>Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկների համար: Քվեաթերթիկների տեսակավորումն իրականացնելու ժամանակ հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ կամ նշումներ կատարելու այլ առարկաներ:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.66, մաս 4)</p>
<p>Հարց 59</p>	<p><i>Նկարագրեք տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեաթերթիկները տեսակավորելուց հետո:</i></p>
<p>Պատ.</p>	<p>Քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ մեկ առ մեկ հաշվարկում է անվավեր ձանաչված քվեաթերթիկների, ինչպես նաև յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը, իսկ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը: Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:</p> <p>Արդյունքներն ամփոփելիս չսահմանված նմուշի քվեաթերթիկները հաշվի չեն առնվում:</p> <p>Հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկները կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով փաթեթավորվում են, իսկ փաթեթները կնքվում և տեղադրվում են ընդհանուր փաթեթում:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.66, մաս 5-7)</p>

Հարց 60	<i>Որո՞նք են համարվում անվավեր քվեաթերթիկներ:</i>
Պատ.	<p>Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝</p> <ol style="list-style-type: none"> 1) մեկից ավելի թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին նշումներ է ներառում. 2) մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ եմ» և «դեմ եմ» բառերի դիմաց նշումներ է ներառում. 3) որևէ նշում չի ներառում. 4) բացի քվեարկության համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կամ դրան նմանվող նշանից ներառում է այլ նշում. 5) ընտրական հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված կամ կնքված չէ. 6) ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը: <p>Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.67, մաս 1)</p>
Հարց 61	<i>Ո՞ր քվեաթերթիկն է համարվում վավեր:</i>
Պատ.	<p>Քվեաթերթիկը վավեր է, եթե այն անվավեր չէ:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.67, մաս 2)</p>
Հարց 62	<i>Որ՞ն է համարվում չսահմանված նմուշի քվեաթերթիկ:</i>
Պատ.	<p>Չսահմանված նմուշի է սահմանված նմուշից տարբերվող քվեաթերթիկը:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.68, մաս 1)</p>
Հարց 63	<i>Ի՞նչ տեղեկություններ են նշվում տեղամասային ընտրական հանձնաժողովի՝ քվեարկության արդյունքների արձանագրության մեջ:</i>
Պատ.	<ol style="list-style-type: none"> 1. Տեղամասային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածով սահմանված կարգով կատարված հաշվարկները, կազմում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն, դրանում նշելով՝ <ol style="list-style-type: none"> 1) յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակի (այդ թվում՝ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակի) ընտրողների թիվը՝ առանձին առանձին. 2) ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր թիվը, որը հավասար է լրացուցիչ ցուցակների ընտրողների թվերի և հիմնական ցուցակում ընդգրկված ընտրողների թվի գումարին. 3) քվեարկության մասնակիցների թիվը (լրացվում է գրանցված և քվեաթերթիկներ ստացած ընտրողների ստորագրությունների թիվը). 4) տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը. 5) մարված քվեաթերթիկների (չօգտագործված և ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված կամ վնասված և հետ տված քվեաթերթիկներ) ընդհանուր թիվը. 6) անվավեր քվեաթերթիկների թիվը. 7) յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը. 8) թեկնածուին դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը (տողը նշվում է մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում). 9) անձշտությունների գումարային չափը: <p style="text-align: right;">(ԸՕ հ. 69, մաս 1)</p>
Հարց 64	<i>Տեղամասային ընտրական հանձնաժողովը ի՞նչ ժամկետում պետք է ամփոփի ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները:</i>
Պատ.	<p>Նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո, հանձնաժողովն ավարտում է արձանագրության կազմումը, իսկ հանձնաժողովի նախագահը հրապարակում է տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.69, մաս 5)</p>

Հարց 65	Քանի՞ օրինակից է կազմվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը:
Պատ.	Արձանագրությունը կազմվում է չորս օրինակից. մեկ օրինակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին, մեկ օրինակը տեղադրվում է ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթում: (ԸՕ հ.69, մաս 6)
Հարց 66	Ո՞վքեր իրավունք ունեն ստանալու տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունից քաղվածք:
Պատ.	Հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով: (ԸՕ հ.69, մաս 8)
Հարց 67	Քվեարկությունից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի փաստաթղթերը տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելու կարգը և ժամկետները:
Պատ.	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը, ընդհանուր փաթեթը, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը և հանձնաժողովի կնիքը քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, ներկայացնում են տարածքային ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: (ԸՕ հ.69, մաս 9)
Հարց 68	Ինչպե՞ս է որոշվում տեղամասում անձշտությունների չափը:
Պատ.	Ընտրական տեղամասում անձշտությունների չափը հաշվարկելու համար՝ 1) համադրվում է տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը մարված քվեաթերթիկների թվի, քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվի գումարի հետ: Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված քվեաթերթիկների թիվը փոքր է մարված քվեաթերթիկների թվի, քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվի գումարից, ապա տարբերությունը՝ թվի բացարձակ արժեքով, նշվում է որպես առաջին անձշտության չափ: Հակառակ դեպքում առաջին անձշտության չափը նշվում է զրո. 2) համադրվում է ընտրողների ցուցակում ստորագրությունների թիվը քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվերի գումարի հետ: Եթե քվեատուփի վավեր և անվավեր քվեաթերթիկների թվերի գումարը մեծ է ընտրողների ցուցակում ստորագրությունների թվից, ապա տարբերությունը՝ թվի բացարձակ արժեքով, նշվում է որպես երկրորդ անձշտության չափ: Հակառակ դեպքում երկրորդ անձշտության չափը նշվում է զրո. 3)1-ին և 2-րդ կետերում նշված թվերի գումարը համարվում է ընտրական տեղամասում անձշտությունների գումարային չափ: (ԸՕ հ.70, մաս 1)
Հարց 69	Ո՞վ կարող է ընտրվել Հանրապետության Նախագահ:
Պատ.	Արցախի Հանրապետության Նախագահ կարող է ընտրվել 35 տարին լրացած, վերջին 10 տարում Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին 10 տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում: (ԸՕ հ.75, մաս 1,2)
Հարց 70	Ո՞վ և ե՞րբ է հայտարարում ԱՀ Նախագահի ընտրությունների օրվա մասին:
Պատ.	Հանրապետության Նախագահի ընտրության օրվա մասին հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ հաղորդագրությամբ հանդես է գալիս կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ: (ԸՕ հ.94, մաս 2)

Հարց 71	Ի՞նչ ընտրակարգով են անցկացվում ԱՀ Ազգային ժողովի ընտրությունները:
Պատ.	Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական և մեծամասնական ընտրակարգերով: 22 պատգամավոր ընտրվում է համամասնական ընտրակարգով, Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուների թվից, 11 պատգամավոր ընտրվում է մեծամասնական ընտրակարգով՝ յուրաքանչյուր ընտրատարածքից մեկ պատգամավոր: (ԸՕ հ.101)
Հարց 72	Ո՞վ է նշանակում ԱՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունները:
Պատ.	Հերթական ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության Նախագահը հրապարակում է հրամանագիր՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ: (ԸՕ հ.125, մաս 2)
Հարց 73	Քանի՞ անդամից է բաղկացած համայնքի ավագանին:
Պատ.	Համայնքի ավագանին բաղկացած է՝ 1) 5 անդամից՝ մինչև 1000 ընտրող ունեցող համայնքում. 2) 7 անդամից՝ 1000-ից մինչև 3000 ընտրող ունեցող համայնքում. 3) 11 անդամից՝ 3000-ից մինչև 20000 ընտրող ունեցող համայնքում. 4) 15 անդամից՝ 20000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում: (ԸՕ հ.128, մաս 3)
Հարց 74	Ո՞վ կարող է ընտրվել ավագանու անդամ:
Պատ.	Համայնքի ավագանու անդամ կարող են ընտրվել 25 տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին մեկ տարվա հաշվառում ունեցող, ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության ժամանակ ընտրելու իրավունք ունեցող անձինք: (ԸՕ հ.130, մաս 2)
Հարց 75	Ովքե՞ր չեն կարող առաջադրվել որպես համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու:
Պատ.	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, ոստիկանության, ազգային անվտանգության, դատական ակտերի հարկադիր կատարման, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովի անդամները: (ԸՕ հ.130, մաս 3)
Հարց 76	Ովքե՞ր իրավունք ունեն առաջադրել համայնքի ղեկավարի և ավագանու անդամների թեկնածուներին:
Պատ.	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուներ կարող են առաջադրել կուսակցությունները, ինչպես նաև ընտրվելու իրավունք ունեցող քաղաքացիները՝ ինքնաառաջադրման կարգով, այդ մասին ներկայացնելով դիմում, որի ձևը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Կուսակցությունը կարող է համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու առաջադրել նաև իր կուսակցության անդամ չհանդիսացող անձի: (ԸՕ հ.131, մաս 1)
Հարց 77	Ի՞նչ տեղեկություններ են ներառում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու առաջադրելու մասին կուսակցության որոշումը, ինքնաառաջադրման դեպքում՝ դիմումը:
Պատ.	Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու առաջադրելու մասին կուսակցության որոշումը, ինքնաառաջադրման դեպքում՝ դիմումը ներառում են համայնքի անվանումը և թեկնածուի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ 1) ազգանունը, անունը, հայրանունը. 2) ծննդյան ամսաթիվը. 3) հաշվառման վայրը. 4) աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը). 5) կուսակցական պատկանելությունը, ինչպես նաև կարող են ներառել թեկնածուի մինչև երկու լիազոր ներկայացուցչի վերաբերյալ տվյալներ (նրանց ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի համարը, աշխատանքի վայրը և պաշտոնը (զբաղմունքը): (ԸՕ հ.131, մաս 2)

Հարց 78	Ինչպիսի՞ տեղեկություններ (փաստաթղթեր) են ներկայացնում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները կուսակցության որոշումներին կամ ինքնաառաջադրման դիմումներին կից:
Պատ.	<p>Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուները կուսակցության որոշմանը կամ ինքնաառաջադրման մասին դիմումին կից տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) ընտրական գրավի գումարի վճարման անդորրագիրը: Մինչև 1000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն վճարում է նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի, ավագանու անդամը՝ նվազագույն աշխատավարձի, 1000-ից մինչև 3000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 30-ապատիկի, ավագանու անդամը՝ կրկնապատիկի, 3000-ից մինչև 20000 ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 50-ապատիկի, ավագանու անդամը՝ եռապատիկի, իսկ 20000-ից ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում համայնքի ղեկավարի թեկնածուն՝ 200-ապատիկի, ավագանու անդամը՝ հնգապատիկի չափով ընտրական գրավ. 2) տեղեկանք՝ վերջին մեկ տարում տվյալ համայնքում հաշվառված լինելու մասին. 3) անձը հաստատող փաստաթղթի պատճենը: <p style="text-align: right;">(ԸՕ հ.131, մաս 3)</p>
Հարց 79	Համայնքի ղեկավար և ավագանու անդամ առաջադրված թեկնածուներին ո՞ր ընտրական հանձնաժողովն է գրանցում:
Պատ.	<p>Համայնքի ղեկավար և ավագանու անդամի թեկնածուները գրանցվում են տարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.132, մաս 1)</p>
Հարց 80	Ինչպիսի՞ տեղեկություններ են նշվում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրության քվեաթերթիկում:
Պատ.	<p>Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների քվեաթերթիկներում համապատասխանաբար նշվում են թեկնածուների ազգանունները, անունները և հայրանուններն՝ ազգանվան այբբենական հերթականությամբ, առաջադրող կուսակցության անվանումը, ինքնաառաջադրման դեպքում՝ ինքնաառաջադրում բառը: Թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները համընկնելու դեպքում նշվում է նաև ծննդյան ամսաթիվը:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.140, մաս 1)</p>
Հարց 81	Համայնքի ղեկավարի թեկնածուն ե՞րբ է համարվում ընտրված:
Պատ.	<p>Համայնքի ղեկավար է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին:</p> <p>Եթե հավասար թվով առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են երկու և ավելի թեկնածուներ, ապա ընտրված թեկնածուին որոշելու համար նրանց միջև անցկացվում է վիճակահանություն:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.141, մաս 2)</p>
Հարց 82	Համայնքի ղեկավարի ընտրությունը ե՞րբ է համարվում չկայացած:
Պատ.	<p>Համայնքի ղեկավարի ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝</p> <ol style="list-style-type: none"> 1) քվեարկված միակ թեկնածուին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ. 2) ընտրական օրենսգրքով թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով թեկնածու չի գրանցվել. 3) ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքերում. 4) վերաքվեարկության արդյունքների հիման վրա ընտրություններն անվավեր են ճանաչվել. 5) ընտրությանը չի մասնակցել ընտրողների առնվազն 25 տոկոսը: <p style="text-align: right;">(ԸՕ հ.141, մաս 6)</p>

Հարց 83	Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները ե՞րբ են անցկացվում և ո՞վ է նշանակում դրանք:
Պատ.	<p>Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններն անցկացվում են ոչ ուշ, քան տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ավարտից 30 օր առաջ:</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակում է կառավարությունը՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների լիազորությունների ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 70 օր առաջ:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.143, մաս 1, 2)</p>
Հարց 84	Տեղական ինքնակառավարման մարմինների արտահերթ ընտրությունները ո՞վ է նշանակում և ե՞րբ է անցկացվում:
Պատ.	<p>Համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունն անցկացվում է համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու կամ նրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող քառասնօրյա ժամկետի վերջին կիրակի օրը:</p> <p>Կառավարությունն արտահերթ ընտրության նշանակման մասին որոշում է ընդունում համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու կամ լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հետ միաժամանակ:</p> <p>Համայնքի ավագանու անդամների ընդհանուր թիվը կիսով չափ նվազելու դեպքում արտահերթ ընտրություն նշանակելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող քառասնօրյա ժամկետի վերջին կիրակի օրն անցկացվում է համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություն:</p> <p>Պատերազմի ժամանակ կամ արտակարգ դրության պայմաններում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություն չի անցկացվում, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև պատերազմի կամ արտակարգ դրության ավարտից հետո նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինների առաջին նիստը: Այդ դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունն անցկացվում է պատերազմի կամ արտակարգ դրության ավարտից հետո՝ ոչ շուտ, քան յոթանասուն և ոչ ուշ, քան հարյուր օրվա ընթացքում՝ արտահերթ ընտրության համար ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:</p> <p style="text-align: right;">(ԸՕ հ.145, մաս 1,2,3,4)</p>